ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«18» «Նոյեմբերի» 2019թ. № 399-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N172-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 21-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2018 թվականի հունիսի 22-ի «Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 172-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի վերնագրում և տեքստում «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով.

2) հրամանով հաստատված հավելվածի վերնագրում, 1-ին և 12-րդ կետերում «բնապահպանության» բառը փոխարինել «շրջակա միջավայրի» բառերով.

3) դադարեցնել Անտառային կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող ներքին աուդիտի բաժնի գործունեությունը.

4) այդ կապակցությամբ ուժը կորցրած ճանաչել հրամանի հավելվածի 26-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ Է.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Invalid signature

X

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

«18» Հոկտեմբերի 2019թ. ք. Երևան